შეფასებისა და გამოცდების
ეროვნული ცენტრი

Դեկտեմբեր, 2025

# Թեստ՝ տարրական աստիճանի ուսուցիչների համար

## Բնագիտություն

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ առարկայական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է 53:

Ուշադրությամբ ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, լավ ըմբռնեք առաջադրանքի պահանջը և դրանից հետո սկսեք աշխատանքը: Թեստի վրա աշխատելիս՝ կիրառեք կցված քարտեզները:

**Ի նկատի ունեցեք.**

- Եթե ճիշտ պատասխանի հետ միասին նշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր չեք ստանա:

**Թեստի վրա աշխատանքի համար տրվում է 4 ժամ:**

**Ցանկանում ենք հաջողություն:**

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:



# Առարկայական գիտելիք

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **1.** Կենդանի օրգանիզմին բնորոշ է.

I – իր նմանի ստեղծում

II – աճ և զարգացում

III – սննդառություն և շնչառություն

ა) Միայն I և II,

ბ) միայն I և III,

გ) միայն II և III,

დ) I, II և III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **2.** Հետազոտական ո՞ր գործիքն են օգտագործում կենդանի բնությունն ուսումնասիրելու համար:




ա) Միայն A և B,

բ) միայն A և C,

գ) միայն B և C,

դ) A, B և C:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **3.** Ո՞ր թվանշանով նշված օրգանը **<u>չի մասնակցում</u>** բույսի անսեռ բազմացմանը:




ա) 1

բ) 2

գ) 3

դ) 4

(1) **4.** Ո՞ր օրգանների աշխատանքն է ակտիվանում լողալիս:

I – Թոքերի II – Սրտի III – Կմախքային մկանների

ա) Միայն I և II,
բ) միայն I և III,
գ) միայն II և III;
դ) I, II և III:

(1) **5.** Ինչպիսի՞ միջավայրում է բնակվում նկարում պատկերված աղվեսը:



ա) Անապատում,

բ) ընդարձակ դաշտերում,

գ) ճահճոտ տեղերում,

ղ) անտառային միջավայրում:

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

(1) **6.** Ո՞ր գործընթացի իրականացումն է օգնում մարդուն պահպանել շրջակա միջավայրը:

I – Շրջակա միջավայրի մշակումը հնսեկտիցիդներով (միջատասպաններով)

II – Երկրորդային ռեսուրսների ռեցիկլյացիան

III – Ռադիոակտիվ նյութերի հողի մեջ թաղումը

ա) Միայն I,

բ) միայն II,

գ) միայն III,

դ) I և II:

(1) **7.** Ո՞ր գործընթացներն են ընթանում տերևում հերձանցքների միջոցով:

I –Գազափոխանակությունը

II – Ջրի գոլորշիացումը

III –Թթվածնի արտազատումը շրջակա միջավայր

ա) Միայն I և II,

բ) միայն I և III,

գ) միայն II և III,

դ) I, II և III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **8.** Թվարկված օրգանիզմներից ո՞րն է II կարգի սպառող:

ա) Փիղը,

բ) սկյուռը,

գ) գորտը,

դ) այծյամը:.

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **9.** Բույսը կարող է բազմանալ.

I – սպորով　　II – սերմով　　III – ցողունով

ա) Միայն I և II,

բ) միայն I և III,

գ) միայն II և III,

դ) I, II և III:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **10.** Ո՞ր հատկանիշն է բնորոշ երկենցաղներին:

1. Ձվով բազմացումը
2. Սերունդների խնամքը
3. Սառնարյունությունը
4. Խռիկներով շնչառությունը

ա) 1 և 2,

բ) 3 և 4,

գ) 1 և 3,

դ) 2 և 4:

(1) **11.** Թվարկածներից ո՞րն է գրգռականության (զգայունության) օրինակ:

I – Արևածաղիկի ծաղիկների շրջվելը դեպի արև

II – Ցորենի սերմից բույսի ծլելը

III – Միմոզային դիպչելիս տերևների ծալվելը

ա) Միայն I և II,

բ) միայն I և III,

գ) միայն II և III,

դ) I, II և III:

(1) **12.** Արյան շրջանառության համակարգում.

ա) զարկերակային արյունն օրգաններից դուրս է բերում վնասակար նյութերը,
ծ) երակային արյունը դեպի բոլոր օրգաններն է տեղափոխում ածխաթթու գազը,
ց) զարկերակային արյունը դեպի օրգաններ է տեղափոխում սննդանյութերը,
ա) երակային արյունը դուրս է բերում օրգաններից թթվածինը:

(1) **13.** Ո՞ր լատինական տառով է նշված I կարգի սպառողի գանգը:




ա) Միայն A,

բ) միայն B,

գ) միայն C,

դ) A և B:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **14.** Հարմարվողականության ո՞ր ձևն է կիրառում զատիկը թշնամիներից պաշտպանվելու համար:

I – Նախազգուշացնող գունավորումը

II – Հովանավորող գունավորումը

III – Միմիկրիան

ა) Միայն I,

ბ) միայն II,

გ) միայն III,

დ) II և III:

(1) **15**. Նկարում թվանշաններով նշված են տարբեր բույսերի պտուղը և սերմը: Դրանցից ո՞րն է տարածվում կենդանիների օգնությամբ:



1 2 3 4

ა) 1

ბ) 2

გ) 3

დ) 4

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **16.** Ո՞ր թվանշանով նշված ոսկորն է անմիջականորեն միանում ողնաշարի ողերին:




ა) 1

ბ) 2

გ) 3

დ) 4


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **17.** Մողեսների թվաքանակի նվազումը ի՞նչ կառաջացներ նկարում պատկերված սննդային շղթայում:



ა) Օձերի քանակի աճ,

ბ) բվերի քանակի նվազում,

გ) մորեխների քանակի նվազում,

დ) եգիպտացորենի քանակի աճ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **18.** Ո՞ր հիվանդություններն են առաջացնում միաբջիջ օրգանիզմները:

1. Մալարիան 2. Գրիպը 3. Խոլերան 4. ՁԻԱՀ-ը

ա) 1 և 3,
բ) 1 և 4,
գ) 2 և 3,
դ) 2 և 4:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **19.** Ըստ նկարի որոշե՛ք ո՞ր արյան անոթն է վնասված (I) և ի՞նչ օգնություն է անհրաժեշտ տուժածին՝ արյունահոսությունը դադարեցնելու համար (II):



| | I | II |
|---|---|---|
| ա) | Զարկերակ | Վերքից վերև լարանով սեղմում |
| բ) | Երակ | Վերքից ներքև լարանով սեղմում |
| գ) | Զարկերակ | Վերքի վրա դնել մաքուր կտոր՝ բինտ |
| դ) | Երակ | Վերքի վրա դնել պինդ (ամուր) վիրակապ |

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **20.** Դիագրամի վրա  պատկերված են հավասարաչափ շարժվող չորս մարմնի շարժման ժամանակը  և արագությունները: Ո՞ր երկու մարմինները կարող էին անցնել հավասար հեռավորություններ:




ա) 1-ը և 2-ը,

բ) 1-ը և 3-ը,

գ) 1-ը և 4-ը,

դ) 2-ը և 3-ը:

(1) **21.** Տրված է աղյուսակ.

| Նյութ | Հալման ջերմաստիճան °C-ում | Եռման ջերմաստիճան °C-ում |
|---|---|---|
| X | -40 | 30 |
| Y | -10 | 80 |

Ջերմաստիճանը փոփոխեցին (-20)°C-ից մինչև 100°C: Քանի՞ անգամ կփոփոխվեր աղյուսակում բերված յուրաքանչյուր նյութի ագրեգատային վիճակը:

ա) Երկուսինն էլ մեկական անգամ,

բ) երկուսինն էլ երկու անգամ,

գ) X-ին մեկ անգամ, Y-ին երկու անգամ,

դ) X-ին երկու անգամ, Y-ին՝ մեկ անգամ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **22.** Նկարում պատկերված է հեղուկով չափասրվակ (մենզուր) մինչև մարմին իջեցնելը և իջեցնելուց հետո, ինչպես նաև նույն մարմինը էլեկտրոնային կշեռքի վրա: Ինչի՞ է հավասար մարմնի խտությունը: Մինչև կշեռքի նժարի վրա մարմինը տեղադրելը, կշեռքը զրոյացված էր:




ա) 5 գ/սմ³

բ) 7,6 գ/սմ³

գ) 8 գ/սմ³

դ) 14,4 գ/սմ³


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **23.** Թվարկածներից ո՞ր մոլորակի բնական արբանյակն է Եվրոպան:

ա) Մարսի,

բ) Յուպիտերի,

գ) Սատուռնի,

դ) Վեներայի :

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **24.** Ֆիզիկական երևույթների ժամանակ նյութը անփոփոխ է մնում, իսկ քիմիականի ժամանակ փոփոխվում է և առաջանում է այլ նյութ:

Ի՞նչ են այս տեսանկյունից իրենցից ներկայացնում ստորև թվարկած երևույթները:

I – Երկաթի մագնիսացում

II – Երկաթի ժանգոտում

ա) I – ֆիզիկական, II – քիմիական,

բ) I – Քիմիական , II – ֆիզիկական,

գ) Երկուսն էլ ֆիզիկական,

դ) Երկուսն էլ քիմիական:

(1) **25.** Փորձանոթները, որոնց մեջ լցված էին սենյակային ջերմաստիճանի A, B և C հեղուկներ, իջեցրին սառցային ջրի մեջ: Ո՞ր նյութը կպնդանա այդ ժամանակ:

Տեղեկությունն այդ նյութերի հալման ջերմաստիճանի մասին կարող եք տեսնել ստորև տրված աղյուսակում:

| **Նյութ** | **Հալման ջերմաստիճան,** ℃ |
|---|---|
| **A** | −5 |
| **B** | +5 |
| **C** | +15 |

ა) Միայն A,

ბ) Միայն A և B,

გ) Միայն B և C,

დ) Երեքն էլ:

(1) **26.** Տրված պնդումներից ո՞րն է **<u>սխալ:</u>**

I – Ատոմը  բաղկացած է մոլեկուլներից

II – Մոլեկուլները  բաղկացած են ատոմներից

III – Նյութերը  բաղկացած են մոլեկուլներից

ա) Միայն  I,

բ) Միայն II,

գ) Միայն  I և III,

դ) Միայն II և III:

(1) **27.** Ո՞ր օվկիանոսի քարտեզի հատվածն է ներկայացված առաջադրանքում:




ա) Խաղաղ,
բ) Ատլանտյան,
գ) Հնդկական,
դ) Հարավային:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **28.** Ո՞ր լուսանկարում է պատկերված սեյսմոլոգ:













1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **29.** Ըստ քարտեզի հատվածի հաշվեք, թե ծովի մակարդակից մոտավորապես քանի՞ մետր բարձրության վրա է գտնվում B կետը:




ა) 131
ბ) 133
გ) 135
დ) 137


[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

(1) **30.** Համաձայն քարտեզի հատվածի ո՞ր դրույթն է *սխալ*:




Մասշտաբ 1:10 000

ա) 1-ին և 2-րդ հողամասերը գտնվում են գետի ձախ ափին,

բ) կամրջի վրա կանգնած դիտորդի համար ջրհորը գտնվում է հյուսիսային հատվածում,

գ) Ցիվի գետի աջ ափի երկայնքով ձգվում է ձոր,

դ) քարտեզի վրա պատկերված է լայնատերև անտառի ծառուտ:


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **31.** Թվարկվածներից դեպի ո՞ր քաղաքն է ամենակարճ, ուղիղ գծով հեռավորությունը քաղաք Սիդնեյից:




ა) Թբիլիսի,
ბ) Սան Պաուլու,
გ) Լոնդոն,
დ) Սան Ֆրանցիսկո:

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

(1) **32.** Քարտեզի վրա պատկերված վայրերից ո՞րը *չի համարվում* պինգվինամանների տարածման բնական միջավայր:



ა) 1
ბ) 2
გ) 3
დ) 4




[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

(1) **33**. Քարտեզի վրա նշված վայրերից ո՞րն է սեյսմիկ ակտիվության ամենաբարձր գոտին:




ა) 1
ბ) 2
გ) 3
დ) 4

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **34.** Ստորև ներկայացված Վեննի դիագրամներից ո՞րն է ճիշտ: Դիագրամները կազմված են հետևյալ սխեմայով՝ 1. արշավախումբը ֆինանսավորող երկիրը, 2. ճանապարհորդության հիմնական նպատակը, 3. առաջին ճանապարհորդության իրականացման դարը, 4. ճանապարհորդության արդյունքները:

ա)




բ)




գ)




դ)




1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **35.** Սխեմայի վրա լատինական ո՞ր տառով է նշված մանթիան:




ა) A
ბ) B
გ) C
დ) D


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **36.** Ստորև ներկայացված են Արեգակնային համակարգի գազային հսկաների աֆելիոնները (մոլորակի ուղեծրի վրա Արեգակից ամենահեռավոր կետը): Ո՞րն է Յուպիտեր մոլորակի աֆելիոնը:

ა) 816,62 մլն կմ

ბ) 1 513,32 մլն կմ

გ) 3 004,41 մլն կմ

დ) 4 553,94 մլն կմ

(1) **37.** Սխեմաների վրա պատկերված ո՞ր գործողությունն է ամենավտանգավորը ուժեղ և ավերիչ երկրաշարժի ժամանակ:




1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **38.** Ելնելով առաջադրանքում ներկայացված սխեմայից թվարկածներից ո՞ր պնդումն է ճիշտ՝ կապված ուղեծրի վրա Երկրի A դիրքի հետ:




ა) Հյուսիսային կիսագնդում ձմեռ է:

ბ) Երկրի վրա ըստ օրացույցի սեպտեմբերի 23-ն է:

გ) Հարավային կիսագնդում ամառ է:

დ) Հյուսիսային բևեռում բևեռային օր է:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **39.** Ո՞ր բնական ռեսուրսի արդյունահանումն է պատկերված տրված լուսանկարում:



ա) Մնդիկի,
բ) ոսկու,
գ) նավթի,
դ) մանգանի:

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#)
[27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#) [43](#) [44](#) [45](#)

# Ակադեմիական հմտություններ

## Ընթերցած տեքստի վերաիմաստավորում

*Ուշադրությամբ ընթերցե՛ք և իմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ տրված տեքստի համաձայն:*

*Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:*

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

I Ժամանակակից իրականության մեջ, որտեղ ծնողները ավելի ու ավելի սակավ ժամանակ են անցկացնում իրենց զավակների հետ, հատկապես կարևոր է գտնել բարոյական դաստիարակության արդյունավետ ուղիներ: Գոյություն ունի կարծիք, որ երեխաների կարծիքները՝ հայացքները ճշտի և սխալի, արդարության և անարդարության վերաբերյալ, չեն ներկայացնում մեծահասակների ուսուցման ուղղակի արդյունքը: Այն ուղիներից մեկը, որը հնարավորություն է տալիս երեխաներին հասկանալու բարոյական վարքի առավելությունները, քննարկվում են հեքիաթները:

II Հեքիաթները փոխաբերությունների միջոցով կարող են կարևոր սոցիալական և բարոյական դեր կատարել երեխայի զարգացման մեջ: Հեքիաթում գոյություն ունեցող տեսողական պատկերները քողարկված կերպով արտացոլում են իրականությունը, ներկայացնում են փոխաբերություններ, որոնք օգնում են երեխաներին կատարելու ճիշտ ընտրություն: Նման փոխաբերությունները երեխաներին նրանց հասկանալի լեզվով փոխանցում են կարևոր բարոյական և կյանքի դասերը տեսանելի և հուզականորեն գրավիչ ձևով: Հեքիաթներում գոյություն ունեցող փոխաբերությունները կարող են օգնել երեխաներին հասկանալու փոխանցված այնպիսի վերացական հասկացություններն ու սկզբունքները, որոնք այլապես նրանց համար անհասկանալի կլինեին, քանի որ երեխաների մոտ դեռևս ձևավորված չէ վերացական մտածողության ունակություն: Փոխաբերությունները բարոյապես արդարացված և չարդարացված վարքագծերը վերածում են պատկերների: Դրական փոխաբերությունը գրավիչ և հետաքրքիր է դարձնում բարոյական վարքագիծը, մինչդեռ բացասական փոխաբերությունը ընթերցողին ցույց է տալիս անբարոյական վարքագծի հետևանքները և հորդորում է խուսափել նման վարքագծից: Օրինակ՝ «մութ անտառը» շփոթության, վախի և դժվարությունների փոխաբերություն է, «վիշապը»՝ անձնավորության սեփական թուլությունների փոխաբերություն է, որը պետք է հաղթահարել, «ոսկե խնձորը»՝ դժվար հասանելի երջանկության փոխաբերություն է, որի համար հերոսը անցնում է խոչընդոտներով լի երկար ճանապարհ:

Անցնել հարցերին. 40 41 42 43 44

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

III Այն, ինչը երեխայի մեջ բարոյականություն է սերմանում, ոչ թե արդարության /բարու հաղթանակն է հեքիաթի վերջում, այլ այն գրավիչ հերոսը, որի հետ երեխան կատարում է իր անձի նույնականացում: Այդ նույնականացման պատճառով երեխան իր երևակայության մեջ հերոսի հետ կանցնի բոլոր փորձությունների միջով և նրա հետ միասին կտոնի բարու հաղթանակը: Հեքիաթների երեխայական ընկալումը տարբերվում է նրանց տարիքի համաձայն, հեքիաթը երբեք «ուղղակիորեն» չի ընկալվում: Յուրաքանչյուր երեխա հեքիաթի թեման հասկանում է իր տարիքին, գիտելիքներին, փորձին, ֆիզիկական, հուզական, ճանաչողական և բարոյական զարգացման մակարդակին, այն ձգտումներին և մարտահրավերներին համապատասխան, որոնց բախվում է տվյալ երեխան տվյալ պահին:

IV Մի հետազոտության մեջ ուսումնասիրեցին 3-ից 9 տարեկան երեխաների կողմից նրանց համար անծանոթ փոխաբերությունները հասկանալու ունակությունը: Պարզվեց, որ այդ ունակությունը բարելավվում է տարիքի ավելացման հետ միասին, չնայած բոլոր տարիքի երեխաներին փոխաբերությունները հասկանալու համար անհրաժեշտ է տեսողական պատկեր/նկարազարդում:

V Հեքիաթում երեխան տեսնում է գործողությունը՝ կոնկրետ սցենարում, ինչը նրան օգնում է հասկանալու իրադարձությունների միջև պատճառա-հետևանքային կապերը և դրանք փոխանցել իրականությանը: Բացի այդ, հեքիաթը առաջացնում է հույզեր, ինչը մեծացնում է տեղեկատվությունը երկար ժամանակ հիշելու հավանականությունը:

Անցնել հարցերին. 40 41 42 43 44

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **40. Ո՞րն է առաջին պարբերությունից արված հիմնական եզրակացությունը:**

ա) Ծնողները ավելի ու ավելի սակավ ժամանակ են անցկացնում իրենց զավակների  հետ:

բ) Բարոյական վարքի առավելությունների ըմբռնումը մեծահասակների ուսուցման արդյունք է:

գ) Բարոյական կրթության անուղղակի ուղիներից մեկը քննարկվում է   հեքիաթը:

դ) Երեխաների բարոյական կրթության մակարդակը գնալով ավելի ու ավելի ցածրանում է:

Վերադարձ տեքստի  I էջին

Վերադարձ տեքստի  II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **41. Ի՞նչ ճանապարհով է կարողանում հեքիաթում ներկայացված փոխաբերությունը փոխանցել երեխաներին իրականության մասին արժեքավոր դաս:**

ա) Փոխաբերությունները հեքիաթում անհավանական իրադարձություններին շնորհում են իրատեսական նշանակություն և դրանք հետաքրքիր են դառնում երեխայի համար:
բ) Փոխաբերության միջոցով վերացական բարոյական սկզբունքները ներկայացվում են որպես տեսանելի պատկերներ և հուզականորեն գրավիչ գործողություններ:
գ) Բացասական փոխաբերությունները բարոյապես անարդարացի վարքագիծը դարձնում են երեխայի համար գրավիչ :
դ) Դրական փոխաբերությունների միջոցով ներկայացված իրադարձությունները ստանում են զվարճալի տեսք և դառնում են երեխայի համար հեշտ հասկանալի:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **42. Ինչո՞ւ է հեքիաթն ավելի ուժեղ ազդեցություն գործում երեխայի վրա, քան ծնողի կամ ուսուցչի ուղղակի ցուցումները:**

ա) Հեքիաթում բարին միշտ հաղթում է չարին, ինչը մատուցվում է երեխայի համար հասկանալի լեզվով:
բ) Հեքիաթը երեխան ընկալում է իր տարիքին, փորձին, ճանաչողական և բարոյական զարգացման մակարդակին համապատասխան:
գ) Մանկության տարիներին փոխաբերություններն ավելի հեշտ հասկանալի են, քան ուղղակիորեն ասված ցուցումները:
դ) Երեխան իրեն նույնականացնում է հեքիաթի հերոսի հետ, դառնում նրա հետ միասին գործող հերոս և այդ ճանապարհով ավելի լավ է հասկանում այս կամ այն վարքագծի արդարացիությունը:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **43. Թվարկածներից ո՞ր կարծիքի փաստարկման համար պիտանի կլինի չորրորդ պարբերությունում ներկայացված հետազոտության արդյունքը:**

ա) Երեխաների բառոյական զարգացման միակ աղբյուրը հեքիաթներում ներկայացված փոխաբերություններն են:

բ) Երեխաներին սովորեցնելու գործընթացում վերացական գաղափարների փոխանցումը խորհուրդ է տրվում ուղեկցել պատկերավոր նյութով:

գ) Երեխաները վաղ տարիքից արդեն ունեն վերացական գաղափարները և բարոյական դիլեմաները հասկանալու ունակություն:

դ) Երեխաները դժվարանում են «ուղղակի» հասկանալ հեքիաթի հիմնական գաղափարը, այդ հարցում նրանց օգնում են իրենց գիտելիքներն ու փորձը:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(1) **44. Թվարկածներից ո՞րն է ազդեցության այն գլխավոր ուղին, որի միջոցով էլ հեքիաթները օգնում են երեխաներին հասկանալու բարոյական վարքագիծը:**

ա) Հուզական ներգրավվածությունը և տեսողական փոխաբերությունները:
բ) Հեքիաթի լեզվի պարզությունը՝ հստակ փոխանցված գաղափարները:
գ) Հեքիաթի ավանդական կառուցվածքը՝ երջանիկ ավարտ:
դ) Հեքիաթի հերոսի հետ տարիքային մոտիկությունը և կոնկրետ սցենարը:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45

(9) **45. Վերլուծական էսսե**

Ուշադրությամբ ծանոթացե՛ք առաջադրանքում տրված երկու փոխադարձաբար հակասական դրույթներին: Կատարե՛ք ընտրություն՝ հօգուտ դրանցից մեկի: Բերե՛ք փաստարկներ ձեր ընտրությունը հիմնավորելու համար և քննադատաբար գնահատեք հարցը վճռելու երկրորդ հնարավոր ուղին:

ա) Անհրաժեշտ է, որ ուսուցիչը մշտապես տնային առաջադրանքներ հանձնարարի, որպեսզի աշակերտները կարողանան ձեռք բերել առարկայական գիտելիք և զարգացնեն գործնական ունակություններ:

բ) Դպրոցը և դասաժամի գործընթացը ներկայացնում են առարկայական գիտելիք ձեռքբերելու, ինչպես նաև գործնական ունակություններ զարգացնելու եզակի արդյունավետ միջոց, որոնք օրակարգից վերացնում են աշակերտին տնային առաջադրանքներով մշտապես ծանրաբեռնելու հարցը:

Փոխադրությունը պետք է պարունակի առնվազն 120 բառ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45